



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ. (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«13» մարտի 2023թ. № 215

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՈՒՐԱՑԱՆԻ ՓՈՂՈՑԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՆԿՈՒՂԻ, ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ԱՍՏԻՃԱՆԱՀԱՐԹԱԿԻ, ԾԱԾԿԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԼԱՌԻՐԱ ՄԱՄԻԿՈՆԻ ՅԱՐՄԱԼՈՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1328-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Լաուրա Մամիկոնի Յարմալոյանի կողմից տիրապետվող՝ Սպիտակ համայնքի Մուրացանի փողոցում գտնվող, 06-006-0464-0008 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասից առանձնացված 0,04000 հեկտար մակերեսով հողամասը կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով, հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, հողամասի վրա 1994 թվականին կառուցված նկուղը, բնակելի տունը, աստիճանահարթակը և ծածկը համապատասխանում են քաղաքաշինական նորմերին ու կանոններին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, հիմք ընդունելով Սպիտակ համայնքի ղեկավարի 2023 թվականի հունվարի 31-ի թիվ 104 որոշումը, Կադաստրի կոմիտեի հաշվառման ծածկագիրը՝ 2022LJQDX5, «ԳԵՈԳԼՈՐԱԼ» ՍՊԸ-ի

կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված եզրակացությունը, Կադաստրի կոմիտեում հասցեավորման հայտը (քաղվածք՝ 06006YX2RSUZ) և Լաուրա Մամիկոնի Յարմալոյանի դիմումը՝ **որոշում եմ**.

1. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել Լաուրա Մամիկոնի Յարմալոյանի (ծնված 08.03.1956թ.) սեփականության իրավունքը Սպիտակ համայնքի Մուրացանի փողոցի վրա գտնվող, 06-006-0464-0008 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասից առանձնացված 0,04000 հեկտար մակերեսով հողամասի, դրա վրա կառուցված 49,10 քառակուսի մետր մակերեսով նկուղի, 2,50 քառակուսի մետր մակերեսով նկուղի, 79 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան, 2,10 քառակուսի մետր մակերեսով աստիճանահարթակի և 20,90 քառակուսի մետր մակերեսով ծածկի նկատմամբ:


2. Հաստատել Սպիտակ համայնքի Մուրացանի փողոցի վրա գտնվող, 06-006-0464-0008 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասից առանձնացված 0,04000 հա մակերեսով հողամասի հատակագիծը:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքին տրամադրել «ք. Սպիտակ, Մուրացանի փողոց, 90 բնակելի տուն» հասցեն:

4. Սույն որոշմամբ ծագող իրավունքը և տրամադրված հասցեն ենթակա են պետական գրանցման:

5. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի պետի տեղակալ Գայանե Չոբանյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝  Ա. ՄԱԹՈՍՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

« 13 » մարտի 2023թ. № 216

ՄԱՐՏԻ 8-Ի՝ ԿԱՆԱՆՑ ՏՈՆԻ ԵՎ ԱՊՐԻԼԻ 7-Ի՝ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՂԵՅԿՈՒԹՅԱՆ
ՏՈՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, հաշվի առնելով «Տրոյա կրեդո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ղեկավար Դիանա Մարտիրոսյանի գրությունը, Մարտի 8-ի՝ Կանանց տոնի և Ապրիլի 7-ի՝ Մայրության և գեղեցկության տոնի կապակցությամբ 2023 թվականի մարտ ամսում կայանալիք միջոցառմանը աջակցելու նպատակով՝ **որոշում եմ**.

1. Սպիտակ համայնքի 2023 թվականի բյուջեի «Այլ մշակութային կազմակերպություններ» գործառական դասակարգման «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման 4819 հոդվածից հատկացնել 70 000 ՀՀ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝



Ա. ՄԱԹՈՍՅԱՆ

2023թ. մարտի 13
ք.Սպիտակ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

« 13 » մարտի 2023թ. № 217

ԱՐՄԵՆ ՌՈՍՏՈՄԻ ՀԱԿՈՔՋԱՆՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ
ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով հիմք ընդունելով Սպիտակ համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 73-Ա որոշումը և Արմեն Ռոստոմի Հակոբջանյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող «Լոռու Մարզ, համայնք Սպիտակ ք. Վարպետաց թաղամաս, Երիտասարդության փողոց 2-րդ փակուղի 1 բնակելի տուն» հասցեի 78.2 քառակուսի մետր մակերեսով 3 սենյականոց բնակելի տունը և այդ բնակելի տան հետ, որպես միասնական գույք, պետական գրանցում ստացած 0,0099 հեկտար մակերեսով հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 03102018-06-0059 վկայական՝ տրված 2018 թվականի հոկտեմբերի 3-ին) նվիրատվությամբ փոխանցել Արմեն Ռոստոմի Հակոբջանյանի ընտանիքին՝ որպես ընդհանուր համատեղ սեփականություն.

- 1) Արմեն Ռոստոմի Հակոբջանյան - ինքը՝ ծնված 20.01.1974 թվականին,
- 2) Միլենա Արմենի Հակոբջանյան - դուստրը՝ ծնված 18.04.2004 թվականին,
- 3) Քրիստինա Արմենի Հակոբջանյան - դուստրը՝ ծնված 21.09.2007 թվականին:

2. Նվիրառուների հետ կնքել անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր, որից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների փոխանցման համար անհրաժեշտ փաստաթղթերի կազմման, նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և դրանցից ծագող իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարումները կատարվում են նվիրառուների միջոցների հաշվին:

4. Հանձնարարել՝

1) Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնի պետ Վարուժան Ապրեսյանին՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետում փոփոխություն կատարել համայնքի գույքային հաշվեկշռում.

2) Աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ՝ Երեմ Գրիգորյանին՝ սահմանված կարգով և ժամկետում փոփոխություն կատարել համայնքի հողային հաշվեկշռում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝



Ա. ՄԱԹՈՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«13» մարտի 2023թ. № 218

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ
06-095-0044-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,14 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ
ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հաշվի առնելով որ Սպիտակ համայնքի Ջրաշեն բնակավայրում գտնվող 06-095-0044-0001 կադաստրային ծածկագրով 0,14 հեկտար մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող բնակելի տան 1/12 մասն ըստ օրենքի ժառանգության իրավունքի 2023 թվականի հունվարի 25-ի վկայագրի (գրանցված է սեղանամատյանում N 209) փոխանցվել է Սուսաննա Արմախի Պողոսյանին, հիմք ընդունելով Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06095S5B9CGP) և Սուսաննա Արմախի Պողոսյանի (ծնված՝ 09.10.1956թ.) դիմումը՝ **որոշում եմ**։

1. Սպիտակ համայնքի Ջրաշեն բնակավայրում գտնվող 06-095-0044-0001 կադաստրային ծածկագրով 0,14 հեկտար մակերեսով հողամասին, դրա վրա գտնվող 112,6 քառակուսի մետր մակերեսով բնակելի տանը տրամադրել «Սպիտակ գյուղ Ջրաշեն, 1-ին փողոց, 10-րդ նրբանցք, 16 բնակելի տուն» հասցեն (փոստային դասիչը՝ 1821):
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ՄԱԹՈՍՅԱՆ

2023թ. մարտի 13
ք.Սպիտակ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

« 13 » մարտի 2023թ. № 219

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐ ԽԱՉԱԿԱՊ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ
06-083-0013-0008 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ

0,129 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 1393776 վկայականը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06083VX5ZKDG) և Թագուշ Արտուշի Աղաբեկյանի (ծնված՝ 14.11.1951թ.) դիմումը՝ **որոշում եմ**.

1. Սպիտակ համայնքի Նոր Խաչակապ բնակավայրում գտնվող Թագուշ Արտուշի Աղաբեկյանին, Վլադիմիր Վասիլի Աղաբեկյանին, Հրանտ Վլադիմիրի Աղաբեկյանին և Համլետ Վլադիմիրի Աղաբեկյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող 06-083-0013-0008 կադաստրային ծածկագրով, 0,129 հեկտար մակերեսով հողամասին և դրա վրա գտնվող 95,0 քառակուսի մետր մակերեսով բնակելի տանը, տրամադրել «Սպիտակ, գյուղ Նոր Խաչակապ, 1-ին փողոց, 18 բնակելի տուն» հասցեն (փոստային դասիչը՝ 1817):

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ _____ Ա. ՄԱԹՈՍՅԱՆ



2023թ. մարտի 13
ք.Սպիտակ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

« 13 » մարտի 2023թ. № 220

ԿԱՐԱՊԵՏ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՄԱՋՄԱՆՅԱՆԻՆ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնական կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 34-րդ և 34.2-րդ կետերով, 35-րդ կետի «դ» ենթակետով, 35.1-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 04012023-06-0045 վկայականը, Կարապետ Հովհաննեսի Մազմանյանի համաձայնությունը՝ **որոշում եմ**.

1. Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող՝ «ք.Սպիտակ Ս.Շահումյան փողոց 242 ավտոտնակ» հասցեում գտնվող, 06-006-0490-0119 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,00246 հեկտար մակերեսով հողամասը՝ 71 032,5 ՀՀ դրամ (1 քմ 2887,5 ՀՀ դրամ), իսկ օրինական ճանաչված 21,71 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակը 41 155,8 (1 քմ 1673 ՀՀ դրամ) ՀՀ դրամ արժեքով՝ որպես կառույցն իրականացրած անձի, գնման նախապատվության իրավունքով օտարել Կարապետ Հովհաննեսի Մազմանյանին (ծնված՝ 23.01.1965թ.) :

2. Կարապետ Հովհաննեսի Մազմանյանի հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որից ծագող իրավունքը սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

3. Աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի տեղակալ Գայանե Չոբանյանին և

Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնի պետին՝ սահմանված կարգով փոփոխություն կատարել համայնքի հողային հաշվեկշռում և ամենամյա գույքագրման փաստաթղթերում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ



_____ Ա. ՄԱԹՈՍՅԱՆ

2023թ. մարտի 13
ք. Սպիտակ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

« 13 » մարտի 2023թ. № 221

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՄԼԵՏԻ ՇԻՐՈՅԱՆԻՆ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնական կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 34-րդ և 34.2-րդ կետերով, 35-րդ կետի «դ» ենթակետով, 35.1-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 22022023-06-0045 վկայականը, Հովհաննես Համլետի Շիրոյանի համաձայնությունը՝ **որոշում եմ**.

1. Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող՝ «ք.Սպիտակ Ս.Ավետիսյան փողոց 323/1 ավտոտնակ» հասցեում գտնվող, 06-006-0019-0137 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,003045 հեկտար մակերեսով հողամասը՝ 87 924,375 ՀՀ դրամ (1 քմ 2887,5 ՀՀ դրամ), իսկ օրինական ճանաչված 25,74 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակը 50 942,85 (1 քմ 1673 ՀՀ դրամ) ՀՀ դրամ արժեքով՝ որպես կառույցն իրականացրած անձի, գնման նախապատվության իրավունքով օտարել Հովհաննես Համլետի Շիրոյանին (ծնված՝ 10.03.1977թ.):

2. Հովհաննես Համլետի Շիրոյանի հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որից ծագող իրավունքը սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

3. Աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի տեղակալ Գայանե Չոբանյանին և ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների,

գովազդի, առևտրի և սպասարկման բաժնի պետին՝ սահմանված կարգով փոփոխություն կատարել համայնքի հողային հաշվեկշռում և ամենամյա գույքագրման փաստաթղթերում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱՆ



Ա.ՄԱԹՈՍՅԱՆ

2023թ. մարտի 13
ք.Սպիտակ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«13» մարտի 2023թ. № 222

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝
06-086-0107-0120 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,1 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ
ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ կետով, 50-րդ և 58-րդ կետերով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 10022022-06-0046 վկայականը, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 23-ի թիվ 26-Ա որոշումը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06086EACDBRR)՝ **որոշում եմ.**

1. Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող, Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող, 06-086-0107-0120 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,1 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին տրամադրել «Սպիտակ, գյուղ Շենավան, 1-ին փողոց, 30 հողամաս» հասցեն:

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱՆ



Ա.ՄԱԹՈՍՅԱՆ

2023թ. մարտի 13
ք.Սպիտակ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«13» մարտի 2023թ. № 223

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՍՊԻՏԱԿԻ
ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ 1996 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 25-Ի ԱՐԶ. 4 ԿԵՏ 3 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 57-րդ հոդվածի 2-րդ մասով, 59-րդ 2-րդ մասի 5.1-ին կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության պատգամավորների Սպիտակի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի 1996 թվականի ապրիլի 25-ի արձ. 4 կետ 3 որոշման մեջ Ռազմիկ Հապետի Մահինյանի հայրանունը սխալմամբ գրվել է «Հայրապետի», հիմք ընդունելով Հապետ Զաքարի Մահինյանի մահվան վկայականը, Ռազմիկ Հապետի Մահինյանի (ծնված 25.01.1959թ.) դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության պատգամավորների Սպիտակի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի 1996 թվականի ապրիլի 25-ի «Սպիտակ քաղաքի պետական հանրային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» արձ. 4 կետ 3 որոշման մեջ նշված «Հայրապետի» բառը փոխարինել «Հապետի» բառով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝  Ա. ՄԱԹՈՍՅԱՆ



2023թ. մարտի 13
ք.Սպիտակ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ


«13» մարտի 2023թ. № 224

«ԲԵՍԹԳԱԶ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՂՄՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-ին կետով, համաձայն Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 106-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի, հիմք ընդունելով «ԲԵՍԹԳԱԶ» ՍՊԸ-ի 2023 թվականի մարտի 13-ի հայտը՝ **որոշում եմ.**

1. «ԲԵՍԹԳԱԶ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00927142) տալ «ՀՀ Լոռու մարզ Ղուրսալ համայնք 12-րդ փ. 2 ԱԳԼՃԿ» հասցեում սեղմված բնական գազի վաճառքի թույլտվություն՝ 2023 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ



Ա. ՄԱԹՈՍՅԱՆ

2023թ. մարտի 13
ք. Սպիտակ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ


«13» մարտի 2023թ. № 225

«ԲԵՍԹԳԱԶ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԺԱՄԸ
24:00-ԻՑ ՀԵՏՈ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի «ա» ենթակետով, համաձայն Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 106-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 11-րդ ենթակետի «ա» պարբերության, հիմք ընդունելով «ԲԵՍԹԳԱԶ» ՍՊԸ-ի 2023 թվականի մարտի 13-ի հայտը՝
որոշում եմ.

1. «ԲԵՍԹԳԱԶ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00927142) տալ «ՀՀ Լոռու մարզ Ղուրսալ համայնք 12-րդ փ. 2 ԱԳԼՃԿ» հասցեում ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվություն՝ 2023 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ



Ա. ՄԱԹՈՍՅԱՆ

2023թ. մարտի 13
ք. Սպիտակ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ


«13» մարտի 2023թ. № 226

«ԲԵՍԹԳԱԶ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՂՄՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-ին կետով, համաձայն Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 106-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի, հիմք ընդունելով «ԲԵՍԹԳԱԶ» ՍՊԸ-ի 2023 թվականի մարտի 13-ի հայտը՝ **որոշում եմ**.

1. «ԲԵՍԹԳԱԶ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00927142) տալ «ՀՀ Լոռու մարզ Ղուրսալ համայնք 13-րդ փ. 3» հասցեում սեղմված բնական գազի վաճառքի թույլտվություն՝ 2023 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ



(Handwritten signature)

Ա. ՄԱԹՈՍՅԱՆ

2023թ. մարտի 13
ք. Սպիտակ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«13» մարտի 2023թ. № 227

«ԲԵՍԹԳԱԶ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԺԱՄԸ
24:00-ԻՑ ՀԵՏՈ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի «ա» ենթակետով, համաձայն Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 106-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 11-րդ ենթակետի «ա» պարբերության, հիմք ընդունելով «ԲԵՍԹԳԱԶ» ՍՊԸ-ի 2023 թվականի մարտի 13-ի հայտը՝
որոշում եմ.

1. «ԲԵՍԹԳԱԶ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00927142) տալ «ՀՀ Լոռու մարզ Ղուրսալ համայնք 13-րդ փ. 3» հասցեում ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվություն՝ 2023 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ



Ա. ՄԱԹՈՍՅԱՆ

2023թ. մարտի 13
ք. Սպիտակ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

« 14 » մարտի 2023թ. № 228

ՍՈՒՍԱՆՆԱ ԱՐՄԱԻՍԻ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ԺԱՌԱՆԳԱԲԱՐ ՓՈԽԱՆՑՎԱԾ ԶՐԱՇԵՆ
ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ
ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հաշվի առնելով որ Սպիտակ համայնքի Զրաշեն բնակավայրում գտնվող 0,16 հեկտար մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող բնակելի տան 1/3 մասն ըստ օրենքի ժառանգության իրավունքի 2023 թվականի հունվարի 25-ի վկայագրի (գրանցված է սեղանամատյանում N 209) փոխանցվել է Սուսաննա Արմաիսի Պողոսյանին, հիմք ընդունելով Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06095QAQWJQE) և Սուսաննա Արմաիսի Պողոսյանի (ծնված՝ 09.10.1956թ.) դիմումը՝ **որոշում եմ**.

1. Սպիտակ համայնքի Զրաշեն բնակավայրում գտնվող 0,16 հեկտար մակերեսով հողամասին, դրա վրա գտնվող 116,2 քառակուսի մետր մակերեսով բնակելի տանը տրամադրել «Սպիտակ գյուղ Զրաշեն, 1-ին փողոց, 10-րդ նրբանցք, 16/1 բնակելի տուն» հասցեն (փոստային դասիչը՝ 1821):

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝  Ա. ՄԱԹՈՍՅԱՆ



2023թ. մարտի 14
ք.Սպիտակ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«14» մարտի 2023թ. № 229

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՐԱՀԱՐԹ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ
06-095-0050-0002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,05 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ
ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ N 1158849 վկայականը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06097LQTRSX) և՝ Արմեն Սմբատի Քարամյանի (ծնված՝ 15.09.1983 թվականին) դիմումը՝ **որոշում եմ**.

1. Սպիտակ համայնքի Սարահարթ բնակավայրում գտնվող՝ 06-097-0006-0035 կադաստրային ծածկագրով, 0,05 հեկտար մակերեսով հողամասին տրամադրել «Սպիտակ գյուղ Սարահարթ, 12-րդ փողոց, 43 հողամաս» հասցեն (փոստային դասիչը՝ 1823):

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՄԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ _____ Ա. ՄԱԹՈՍՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Ծառույան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

« 14 » մարտի 2023թ. № 230

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՐԱՀԱՐԹ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ
06-097-0024-0013 ԿԱՂԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,16 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ
ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՑԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ
2387-Ն ՈՐՈՇՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ, 60-րդ և 62-րդ կետերով, հաշվի առնելով, որ Սպիտակ համայնքի Սարահարթ բնակավայրում գտնվող 06-097-0024-0013 կադաստրային ծածկագրով 0,16 հեկտար մակերեսով հողամասին և դրա վրա գտնվող բնակելի տանը տրամադրված «գ. Սարահարթ, թիվ 76 բնակելի տուն» հասցեն չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջներին, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1144794 վկայականը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի առկա հասցեի փոփոխության հայտի հաստատումը (քաղվածք՝ 06097WPSK2H3) և Արմեն Սմբատի Քարամյանի (ծնված՝ 15.09.1983թ.) դիմումը՝ **որոշում եմ.**

1. Սպիտակ համայնքի Սարահարթ բնակավայրում գտնվող 06-097-0024-0013 կադաստրային ծածկագրով, 0,16 հեկտար մակերեսով հողամասին և դրա վրա գտնվող 212,20 քառակուսի մետր բնակելի տան և 47,90 քառակուսի մետր անասնագոմի առկա «գ. Սարահարթ, 76 բնակելի տուն» հասցեն փոփոխել «Սպիտակ գյուղ Սարահարթ, 15-րդ փողոց, 13 բնակելի տուն» հասցեով (փոստային դասիչը՝ 1823):

2. Սույն որոշման 1-ին կետով նշված հասցեի փոփոխությունը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ՄԱԹՈՍՅԱՆ



2023թ. մարտի 14
ք. Սպիտակ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Ծառույան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«14» մարտի 2023 թ. № 231

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԱՂԿԱՔԵՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝
06-049-0048-0006 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,151 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ
ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ
ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ N 1128585 վկայականը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06049FCGBWDL) և Սպարտակ Նապոլեոնի Սանթրոսյանի (ծնված՝ 05.04.1959թ.) դիմումը՝ **որոշում եմ**.

1. Սպիտակ համայնքի Ծաղկաբեր բնակավայրում գտնվող 06-049-0048-0006 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,151 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին, դրա վրա գտնվող 110,9 քառակուսի մետր մակերեսով բնակելի տանը, 49,0 քառակուսի մետր մակերեսով հացատանը և 79,2 քառակուսի մետր մակերեսով անասնագոմին տրամադրել «Սպիտակ գյուղ Ծաղկաբեր, 1-ին փողոց, 34 բնակելի տուն» հասցեն (փոստային դասիչը՝ 1814):

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ _____ Ա. ՄԱԹՈՍՅԱՆ



2023թ. մարտի 14
ք.Սպիտակ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ
« 15 » մարտի 2023թ. № 232

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-006-0184-0004
ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՌԱՆՁՆԱՅՎԱԾ 0,10000 ՀԵԿՏԱՐ
ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿԱՌՈՒՅՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ, ԿԱՌՈՒՅՑՆ
